



CHILDREN  
OF ARMENIA  
FUND

Մամուլի հաղորդագրություն  
22. 10. 2020 թ.

## **ՔՈԱՖ-ը ձեռք ձեռքի պետության հետ՝ հանուն Արցախի**

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ պատերազմը, որին ներգրավված են Թուրքիայի կողմից վարձված ահաբեկիչներ, գոյամարտ է դարձել ամբողջ հայ ժողովրդի համար:

Պատերազմի հենց առաջին օրվանից **«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ)** մոբիլիզացրեց իր ուժերը՝ աջակցելու Հայաստանին և Արցախին այս դժվարին իրավիճակում:

*«Պիտի մեր գործը բազմապատիկ լավ անենք. այդպես ենք պայքարելու ամենքս մեր տեղում, նշում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատրյանը**:- ՔՈԱՖ-ը հրատապության բարձր գիտակցումով է արձագանքում մարդասիրական այս ճգնաժամին»:*

ՔՈԱՖ-ն ամեն օր **մարդասիրական բացառիկ աջակցություն** է ցուցաբերում Արցախից ինքնաբուխ ժամանած անձանց (մինչ օրս տրամադրվել է 40 արկղ սնունդ, ջուր, հագուստ, դեղորայք ու առաջին օգնության պարագաներ, ինչպես նաև հեռախոսի մարտկոցների լիցքավորիչներ, ծածկոցներ ու բարձեր):

**Ապաստարան, սնունդ, հիգիենայի և տնտեսական պարագաներ** է տրամադրում Արցախից տարհանված 63 ընտանիքների: Ընտանիքների թիվը, ցավոք, օր օրի մեծանում է:

Համագործակցելով Հայաստանի ու Արցախի առողջապահության նախարարությունների հետ՝ ՔՈԱՖ-ը բավարարում է **պատերազմական իրավիճակից բխող** անհրաժեշտ դեղորայքային ու բժշկական սարքավորումների կարիքները:

ՔՈԱՖ-ի գյուղական բնակչության համար ապահով վայրերում նախապատրաստել է **ապաստարաններ**: Դրանցից երեքը Տավուշում արդեն իսկ հագեցած են անհրաժեշտ վառելանյութով, քնապարկերով, ծածկոցներով, կրակմարիչներով, հիգիենայի պարագաներով, դեղորայքով, ջրի պաշարներով, պահածոյացված սննդամթերքով ու մոմերով:

ՔՈԱՖ-ի շահառու համայնքների բնակչությանն ու այնտեղ ժամանակավորապես ապաստանած արցախցի ընտանիքներին անմիջական աջակցություն տրամադրելու նպատակով իրավիճակին է հարմարեցրել հիմնադրամի **բազմամասնագիտական ծառայությունները** (սոցիալական աշխատանք, հոգեբանական և առողջապահական ծառայություններ):

Հայաստանի գյուղական համայնքների զարգացման ՔՈԱՖ-ի առաքելությունն ապացուցում է, որ Հայաստանը կարիք ունի մարդկանց, ովքեր մնում են ու ներդրում ունենում համայնքի զարգացման գործում: **#ՀԱՂԹՈՒՄԵՆՔ**



CHILDREN  
OF ARMENIA  
FUND

### **«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին**

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: